

—Տալրիկեան հոգևոր Սեմինարիայի տշակերտները իրար մէջ ժողովում են շաքար, թէյ, դրամ գործող բանակն ուղարկելու համար: Նոքա տօն օրերի երրորդ տեսակ կերակրից հրաժարուել են և խնդրել որ նորա արժէքը ուղարկուի Թեմական Յանձնադրովին: Բարձր դասարանի սաներն յաճախ զօրանոցներում զինուորների հետ ունենում են կրօնական-բարոյական դրոյցներ և պատմական—հայրենասիրական ընթերցումն:

—Պերմսկի Սեմինարիայի սաներն իրենց քաղաքում գտնուած վիրաւոր զինուորների համար կազմում են զբաղանք-երաժշտական երեկոներ: Այդպիսով զինուորների և սաների մէջ հաստատուում է բարոյական ուժեղ կապ:

—Մագիլէի Սեմինարիայի սաները կազմակերպել են «Սեմինարիական սանիտարական կամաւորների խումբ» բաղկացած 80 հոգուց, որոնց պարտականութիւնն է կայարանից վիրաւորներին հասցնել հիւանդանոց: Այդ սաներից 70 հոգի վառուած հայրենասիրական հոգով, ցանկութիւն են յայտնել զնալ գործող բանակը իրրե կամաւոր սանիտարներ:

—Կալուգայի Սեմինարիայի սաները որոշել են ամեն օր իրենց ստանալիք հացի մի մասից զրկուել, իսկ արժէքը յատկացնել յօգուտ վիրաւորներին: Իւրաքանչիւր ամիս ժողովում են 115 ուսւրի և ուղարկում յօգուտ վիրաւորներին: Այդ սաներից կազմուած է առանձին հոգաբարձութիւն նախադաշութեամբ Վերատեսչի, որ խնամք տանեն պատերազմ զնացած և վիրաւոր զինուորների ընտանիքների մասին:

Կ Ա Թ Ո Լ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Բեհեդիկէ XV Պապի առաջին քուրբը. Անցեալ նոյեմբերի 1-ին (ն. տ.) Բենեդիկտ XV-րդ Պապը հրատարակել է իւր առաջին թուղթը՝ ուղղուած կաթոլիկ աշխարհի բոլոր եպիսկոպոսներին, որի մէջ նա արտայայտել է իւր մտքերն ու զգացմունքը ներկայ քաղաքական կեանքի տխուր կացութեան մասին, և մատնանշել է իւր ապագայ եկեղեցական գործունէութեան գլխաւոր խնդիրները: Իւր առաջին խօսքը նուիրում է այն զգացմունքի նկարագրութեան, որ նա սաստիկ տալաւորուել է՝ երբ ինքը կոչուած լինելով ժառանգել Ս. Պետրոսի գահը՝ լսել է Տիրոջ խօսքերը «Արածեա զգառինս իմ... արածեա զոչխարս իմ» (Սւետ. Յովհ. 15—17) և այդ խօսքերի ազդեցութեան տակ հայեացք է ձգել իւր բազմաթիւ հօտի վրայ, որ համարեա, նորա կարծիքով, բաղկացած է բոլոր մարդկանցից: Այդ զգացմունքը նորա մէջ եղել է

սիրոյ բարձր զգացմունք և ցանկութիւն ազատելու ամբողջ մարդկութիւնը: Բայց երբ Պապը վերստին իւր բարձրութիւնից հայեացք է ձգել մարդկութեան վիճակի վրայ ներկայումս, նա զգացել է սուր վիշտ ներկայ արիւնալից պատերազմի սիրտ կտրատող տեսարանից: Պապը պարզ կերպով նկարագրում է ազգերի այս ահաւոր սպանողանոցի պատճառած սարսափները և արհաւիրքները, ազգերի, որոնց մէջ գոռաւորին է այժմ ճանաչել եղբայրներ, մի երկնաւոր Հօր որդիք, և ապա վերջացնելով իւր խօսքերը՝ հրաւիրում է բոլոր Թագաւորներին և Պետերին, որպէս հայր և բարեկամ, անուշադիր չթողնել իւր խօսքերն և վերադարձնել իրենց ժողովրդոց խաղաղութեան բարիքները:

Բայց միայն ներկայ պատերազմը չէ՝ որ վշտացնում է Պապի սիրտը: Նա հրաւիրում է ուշադրութիւն, ժամանակից կեանքի ներքին քայքայման վրայ, որը պատճառել է մարդկութեան մեծամեծ չարիքներ և սպազայումն էլ աւելի առաջ կը բերի, և որը ներկայանում է իսկական աղբիւր ազգերի ներկայումս միմեանց հետ ունեցած պատերազմի: Մասնաւորապէս Բենեդեկտ XV առաջ է բերում հետեւեալ չորս պատճառները կոռւի. ա) պակասութիւն փոխադարձ սիրոյ մարդկանց մէջ. բ) հեղինակութիւն չճանաչելը. գ) անարդարութիւն հասարակութեան զանազան դասակարգերի մէջ. դ) մարդու գործունէութեան միակ նպատակը նիւթական բարիք ընդունելը: Նա մանրամասն խօսում է այդ չորս կէտերի մասին՝ առաջ բերելով քրիստոնէական ուսումը եղբայրական սիրոյ, իշխանութիւնը պատուելու և դէպի երկրային բարիքներն ունենալիք վերաբերմունքի մասին: Այնուհետեւ Պապը երկար կանգ է առնում և խօսում սիրոյ մասին, հրաւիրում է բոլոր եպիսկոպոսների ուշադրութիւնը, որ ամէնքն էլ ջանք գործ դնեն մարդկանց մէջ վերականգնելու ճշմարիտ սէրը, և ինքն իւր կողմից յայտնում է, որ իւր գլխաւոր նպատակը պէտք է լինի ամեն կերպ աջակցելու վերականգնել մարդկանց մէջ կորած ու մարած Աստուածային սէրը: Ապա խօսքն ուղղում է եկեղեցիներին տալ արժանաւոր սպասաւորներ, հրաւիրում է եպիսկոպոսների ուշադրութիւնը՝ որ եկեղեցին փրկելու և հօտը զանազան գայթակղութիւններից ազատ պահելու համար պէտք է առաջ քաշել արժանաւոր և պատրաստուած հոգեւոր սպասաւորներ: Վերջում Պապը կրկին ուշադրութեան է հրաւիրում ներկայ քայքայող պատերազմի վրայ, հրաւիրում է աղօթել առ Աստուած, Որի ձեռքումն է զրոնում Թագաւորների սիրտը, և ամբողջ մարդկութեան անունից բացականչում է «Da pacem, Domine, in diebus rostris», որ նշանակում է. «Տուր խաղաղութիւն, Տէր, մեր օրերին»: